



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Թումանյան

04/07/2023

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝

<<Հանրապետություն>> խմբակցության անդամ՝ Կարո Ղազարյանը
<<Քաղաքացիական պայմանագիր >> խմբակցության անդամներ՝ Արամայիս Աղաբեկյանը,
Սվետլանա Եգանյանը, Նարեկ Հովհաննիսյանը, Լյուդմիլա Հովսեփյանը, Հրանուշ
Վանյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

<<Հանրապետություն>> խմբակցության անդամներ՝ Սուրեն Թումանյանը, Արեն Աղաջանյանը,
Նիկալ Դալլաքյանը, Ռոման Շաքարյանը, Դավիթ Վանյանը, Գոհարիկ Խաչիկյանը, Արամ
Քոչարյանը

<<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության անդամներ՝ Հովնան Բեգլարյանը,
Սեդրակ Գալստյանը,

**Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
վարչական ղեկավարները, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային
ենթակայության ՀՈԱԿ-ների աշխատակիցները և բնակիչներ,**

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Սուրեն Թումանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռուզաննա Շահվերդյանը

Լսեցին

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 07-
Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 65-րդ հոդվածով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Թումանյան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը.
- 1) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2023թ. ապրիլի 07-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
- 2) Թումանյան համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին
- 3) Թումանյան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 27-ի ՀՀ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի 06-035-0200-0016 ծածկագրի 0,139 հա մակերեսով համայնքին սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին >> N 13-Ա որոշումը անվավեր ճանաչելու մասին
- 4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում գտնվող 06-035-0136-0148 ծածկագրի 0,2 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
- 5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում գտնվող 06-035-0200-0018 ծածկագրի 0,13414 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
- 6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում գտնվող 06-035-0136-0148 ծածկագրի 0,2 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
- 7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին
- 8) Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Լորուտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-045-0170-0003 ծածկագրի 0.5 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին
- 9) Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Լորուտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-045-0173-0026 ծածկագրի 0.4 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին
- 10) Հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին
- 11) Թումանյանի համայնքապետարանի գույքացանկում ընդգրկելու մասին
- 12) Թումանյան համայնքի «Առողջություն կենտրոն» ՊՈԱԿ-ի ատամնաբուժարանի հետագա աշխատանքային գործունեության մասին
- 13) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի նիստի օրը որոշելու մասին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16-Ա/

Լսեցին

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐՄԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ/

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 5-րդ ենթակետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել՝ ի գիտություն Թումանյան համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին հաղորդումը՝ համամաձայն հավելվածի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17-Ա/

Լսեցին

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի &&<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-035-0200-0016 Ծածկագրի 0.139 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ &&>> ԹԻՎ 13-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱԿԵՐ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՉՈՓՈՒՐՅԱՆ/

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով և հիմք ընդունելով Լոռու մարզպետի 21.03.2023թ. թիվ 01/111.3/02043-2023 գրությամբ՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Անվավեր ճանաչել՝ Թումանյան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 27-ի << Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի 06-035-0200-0016 ծածկագրի 0,139 հա մակերեսով համայնքին սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին >> N 13-Ա որոշումը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-035-0136-0148 Ծածկագրի 0,2 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՉՈՓՈՒՐՅԱՆ/

Դեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և 5 թղթաժնի պահանջներով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /վկ. N 27032023-06-0017/, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-035-0136-0148 ծածկագրի 0,2 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 700000 (յոթիստույր հազար) ՀՀ դրամ:

2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%-ի չափով:

3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-035-0200-0018 ԾԱԾԿԱԳՐԻ 0.13414 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և 5-րդ բաժնի պահանջներով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-035-0200-0018 ծածկագրի 0,13414 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 1 300 000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Աճուրդի մասնակցության նախալճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%-ի չափով:

3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, 66-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով Քարինջ գյուղի գյուղապետարանի և Լադիկ Հայկազի Մկրտումյանի միջև 14.06.2006 թվականին

կնքված հողամասի /վարելահող/ 25 տարի ժամկետով վարձակալության պայմանագիրը, դրա հիման վրա տրամադրված հողամասի վարձակալության իրավունքի նոր նմուշի թիվ 09032023-06-0015 վկայականը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, Լադիկ Հայկազի Մկրտումյանին վարձակալության իրավունքով 25 տարի ժամկետով 1,2 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողատեսքը օտարելուն:

2. Հաշվի առնելով, որ հողամասը վարձակալության իրավունքով պատկանում է Լադիկ Հայկազի Մկրտումյանին և վարձակալը ունի գնման նախապատվություն՝ 1,2 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողատեսքը 1400000 ՀՀ դրամով ուղղակի վաճառքով օտարել Լադիկ Հայկազի Մկրտումյանին:

3. Համայնքի ղեկավար Սուրեն Թումանյանին օրենքով սահմանված կարգով Լադիկ Հայկազի Մկրտումյանին հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր և համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 21-Ա/

Լսեցին

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԼՈՐՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-045-0170-0003 ԾԱԾԿԱԳՐԻ 0,5 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման 8-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16062020-06-0056 վկայականը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Լորուտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-045-0170-0003 ծածկագրի 0.5 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի անջրդի վարելահող գործառնական նշանակության հողամասը մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:

2. Հաստատել վարձակալության տարեկան մեկնարկային վճարը՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, սահմանել՝ մրցույթի մասնակցության վճար 5000 դրամ, քայլի չափ՝ մեկնարկային վճարի 5%-ի չափով:

3. Գյուղատնտեսական նշանակության հողամասը տրամադրվում է 25 (քսանհինգ) տարի

Ժամանակով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ա/

Լսեցին

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԼՈՐՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ 06-045-0173-0026 ԾԱԾԿԱԳՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման 8-րդ հոդվածով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16062020-06-0066 վկայականը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Լորուտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-045-0173-0026 ծածկագրի 0.4 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արտավայր գործառնական նշանակության հողամասը մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:

2. Հաստատել վարձակալության տարեկան մեկնարկային վճարը՝ 10 000 (տասն հազար) ՀՀ դրամ, սահմանել՝ մրցույթի մասնակցության վճար 5000 դրամ, քայլի չափ՝ մեկնարկային վճարի 5%-ի չափով:

3. Գյուղատնտեսական նշանակության հողամասը տրամադրվում է 25 (քսանհինգ) տարի ժամանակով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 31-րդ ենթակետով, Հայաստանի

Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի,
Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի Հողերի
օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու, <<Հայաստանի
Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը
կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով
ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թի 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման
ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի
14.03.2023թ.թիվ 27 դրական եզրակացությունը՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում քաղաքացի Զոհրաբ Լևոնի Պարոնյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերից 06-035-0123-0116 կադաստրային ծածկագրով 0.14525 հա, 06-035-0123-0117 կադաստրային ծածկագրով 0.12457 հա և 06-035-0123-0114 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.030761 հա մակերեսներով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքները և 06-035-0123-0024 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.07212 հա, 06-035-0123-0025 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.092384 հա մակերեսներով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Առաջարկել Զոհրաբ Լևոնի Պարոնյանին համայնքային բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետով նշված հողամասի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 1 140 082,96(մեկ միլիոն հարյուր քառասուն հազար ութսուն երկու դրամ իննսունվեց լումա) ՀՀ դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ս/

Լսեցին

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Թումանյան համայնքի Աթան բնակավայրի ջրագծի վերանորոգումից գոյացած, 1970- ական թվականներին կառուցված, 312 գծամետր երկարության հնամաշ խողովակաշարերը Թումանյանի համայնքապետարանի գույքացանկում ընդգրկելու համար:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

Լսեցին

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԴՍԵՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊՈԱԿ-Ի ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆԻ ՀԵՏԱԳԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հաշվի առնելով Թումանյան համայնքի ավագանու անդամ Դավիթ Վանյանի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Թումանյան համայնքի <<Դսեղի առողջության կենտրոն>> ՊՈԱԿ-ի ատամնաբուժարանի համար նոր սերնդի դրամարկղային մեքենա ձեռքբերելու համար, Թումանյան համայնքի բյուջեի՝ Այլ ընթացիկ դրամաշնորհներ 4639 հոդվածից տրամադրել 150 000 (հարյուր հիսսան հազար) ՀՀ դրամ:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի նիստի օրը և ժամը սահմանել 2023 թվականի մայիսի 25-ը, ժամը 11:00-ին:
2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք.Թումանյան, 3-րդ փողոց, Մշակույթի պալատ, 2.2:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

Թումանյան համայնքի ավագանու նիստին մասնակից ավագանու անդամներ՝

ԱՂԱԶԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԲԵԳԼԱՐՅԱՆ ՀՈՎՆԱՆ

ԳԱԼՍՅԱՆ ՍԵՂՐԱԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԽԱԶԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՄ

Համայնքի ղեկավար՝

Սուրեն Թումանյան

Աշխատակազմի քարտուղար՝

Ռուզաննա Շահվերդյան

